## ՑՈՒՑԱԿ
## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

### № 651
### ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՆԿԱՐ
(Ներսէս Ե. Աշտարակեցի)

**Թերթերը՝** 1։— **Մեծությունը** 54.7×37.1×0.1 սմ.։ —**Նյութը՝** կեղտոտած հաստ ստվարաթուղթ։— **Կազմ՝** չունի։— **Պահպանակ՝** չունի։— **Վիճակը՝** բավարար։— **Գրությունը՝** երկսյունակ։— **Դատարկ թղթերը՝** 1բ։— **Տողերը՝** 4+5։— **Գծումներ՝** չունի։— **Գիրը՝** նոտրգիր։— **Զարդագրություն՝** պլակատի կենտրոնում կա Ներսես Ե. Աշտարակեցի Կաթողիկոսի (1843—1857 թթ.) օվալաձև հին լուսանկարը (16×12.5 սմ. չափսերով), որի երկու կողքերին կա Ներսիսյան անտառի և լճի փոքր նկարները, ներքևում՝ Ներսիսյան հոգևոր դպրոցի լուսանկարը, իսկ վերևում էլ նկարված է հայրապետական թագը, խաչն ու գավազանը, նաև երկու հրեշտակներ, որոնք թագի ներքևի մասում բռնած են բացված մի գիրք։ Պլակատի ներքևի կենտրոնական մասում կա հայրապետական էմբլեման, որի կենտրոնում գրված է ռուսերեն H տառը (Ներսեսի սկզբնատառը)։ Բացի այդ այս բոլորի շուրջը նկարված են գեղարվեստական ոճով ծառի հաստ ու բարակ ճյուղեր։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** անհայտ (շատ հավանաբար Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցը)։— **Ծաղկողը՝** արվեստագետ Ներսեսով։— **Ժամանակը՝** 1874 թ.։— **Վայրը՝** Վիեննա (Ավստրիա)։— **Ծանոթագրություն՝** պլակատը Վեհափառ Հայրապետին նվիրել է Լոնդոնում Մանչեստրի բնակիչ Գաբրիել Սուլթանյանը 1983 թ. մայիսի 8-ին։ Մայր Աթոռ վերադարձին Վեհափառ Հայրապետն էլ այն հանձնել է Ձեռագրատուն 1983 թ. հունիսի 8-ին։

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Ներսես Ե. Աշտարակեցի կաթողիկոսի գլխավերևի մասում բացված գրքի երկու էջում գրված է)

Որոց զբարիս գործել իցէ՝ ի յարուի կենաց.
Եւ որոց զչար արարեալ՝ ի յարուի դատաստանաց։

(Ներսիսյան անտառի և լճի տակը գրված է)
Լիճ և անտառ Սրբոյ Էջմիածնի։
(Ներսիսյան դպրոցի տակը գրված է)
Ներսիսեան Հոգևոր դպրոց։
(Ընդհանուր պլակատի ներքևի ձախ ու աջ մասում գրված է)

Պաշտպան Եկեղեցւոյ
Ներսէս Հինգերրորդ։

(Սրա ներքևում էլ, Հայրապետական էմբլեմայի երկու կողմում գրված է հետևյալը, երկու սյունակի վրա)

Զոյգ զուարթնոց իջեալ յերկնից՝ պարեն ի թևս շրջանակիդ,
Կալեալ ի գիրկս զբանն Յի՝ և մէն մի ծայր ժապաւինիդ.
Պինդ պատատեալ ը հաստեալ ճղկամբ Հայկեանն սեռիդ,
Կայեն ի մի շրջանակի՝ լուսանկար քում պատկերիդ։

Եւ թարմ ոստունքն փաթութեալ՝ քում Դպրոցաց հոգևարք,
Զխոչս յուրթեն խոռոչս հարթեն՝ պահել անշարժ և անայթաք.
Ցորում մանկունքս Հայկազունք ը հովանեաւ տանդ ծնկեալ,

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1987 թվականի №№ ԺԱ—ԺԲ-ից։

Ջերմ արտասուօք մաղթեմք էին, զի քոյդ փոշեաց
հանգէ կրկին
Հայրենասէր հոգի քոյին։

(Վերոհիշյալը ձեռագիր գրության լուսապատճենն է հանված ստվարաթղթի վրա)։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Պլակատի վերևում գրված է նոտրգրով)
Ի յիշատակ յիսուն տարուայ գոյութեան Ներսիսեան Հայոց Ազգային Հոգևոր Դպրոցին Տփխիսոյ։
(Պլակատի ներքևի մասում գրված է)
Ձախում՝ Собственность Художника Нерсесова.
Աջում՝ Копировать воспрещается.
Ներքևում՝ К. К. Придвор Литогр. Г. Раіф-фенштеін въ Віънiъ.
(Իսկ հայրապետական էմբլեմայի շուրջ գրված է)
Վերևում՝ НЕРСЕСЪ V
Патріархъ вегьхъ Армянъ.
Ներքևում՝ NERSES V
Patriarche de tous les Arméniens.

## № 652
## ՈՒՂԵՐՁ
(Խրիմյան Հայրիկ)
(Հունարեն)

**Թերթերը՝** 1։— **Մեծությունը՝** 55.4×36.5×0.1 սմ.։ —**Նյութը՝** կեղտոտած հաստ ստվարաթուղթ։— **Կազմ՝** չունի։— **Պահպանակ՝** չունի։— **Վիճակը՝** անբավարար։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 1բ։— **Տողերը՝** 25։— **Գծումներ՝** չունի։— **Գիրը՝** ձեռագրով գրված տպագիր հունարեն։— **Զարդագրություն՝** բնագրի վերևի մասում կան ծաղկազարդեր, որոնք այս լուսապատճենում հստակ չեն երևում։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** Մանչեստրի հույն համայնքի առաջնորդ Մորրս արքեպիսկոպոս Իկոնոմու։— **Ծաղկողը՝** անհայտ։— **Ժամանակը՝** 17/29 ապրիլի 1878 թ.։— **Վայրը** Մանչեստր (Անգլիա)։— **Ծանոթագրություն՝** ուղերձը Վեհափառ Հայրապետին նվիրել է Լոնդոնում Մանչեստրի բնակիչ Գաբրիել Սուլթանյանը 1983 թ. մայիսի 8-ին։ Մայր Աթոռ վերադարձին Վեհափառ Հայրապետն էլ այն հանձնել է Ձեռագրատուն 1983 թ. հունիսի 8-ին։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1984 թ., ապրիլ, էջ 37)։

## № 653
## ՈՒՂԵՐՁ

**Թերթերը՝** 2։— **Պրակները՝** 1։— **Մեծությունը՝** 45.4×35 սմ.։— **Նյութը՝** սպիտակ մաքուր մագաղաթ։— **Կազմ՝** չունի։— **Պահպանակներ՝** չունի։— **Վիճակը՝** լավ։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 2բ։— **Տողերը՝** թ. 1ա՝ 24 և թ. 1բ՝ 6։— **Գծումներ՝** չունի։— **Գիրը՝** մեծ նոտրգիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** Գողթան գավառի (Նախիջևան) հայ հասարակություն։— **Ժամանակը** 20 օգոստոսի 1893 թ.։— **Վայրը՝** Գողթան գավառ (Նախիջևան, այժմ Ադրբեջանում)։— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 մարտի 1981 թ.։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1984 թ., ապրիլ, էջ 32)։

## № 654
## ՈՒՂԵՐՁ

**Թերթերը՝** 2։— **Պրակները՝** 1։— **Մեծությունը՝** 45×30 սմ.։— **Նյութը՝** սպիտակ մաքուր թուղթ։— **Կազմ՝** չունի։— **Պահպանակներ՝** չունի։— **Վիճակը՝** լավ։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 1բ—2բ։— **Տողերը՝** 16։— **Գծումներ՝** չունի։— **Գիրը՝** շեղագիր։— **Զարդագրություն՝** գործարանային տպագիր թուղթն ունի գունավոր գեղեցիկ նկարներ։ Վերևի մասում կա կանաչ տերևներով կազմված մի մեծ պսակ, որի ձախին նստած մի կին ձախ ձեռքով թուղթ է բռնած, իսկ աջով՝ գրիչ։ Պսակի աջին էլ նստած մի ուրիշ կին կա, որ աջ ձեռքին մի գավազան ունի, որի վերևի մասում թռչունի բացված երկու թևեր կան, իսկ ներքևում էլ գավազանին փաթաթված երկու օձ։ Կնոջ ծնկերի վրա կա երկու վարդ։ Ձեռագրի ներքևի երկու անկյունում կա մեկական սիրուն մեծ վարդ։ Ամբողջ ձեռագիրն առնված է գեղեցիկ շրջանակում։ Այս բոլորը տպագիր է։— **Գրիչը՝** Սիմեոն Ստ. Սիմեոնյան։ —**Պատվիրատուն՝** Ս. Ս. Սիմեոնյանի ընտանիքը։— **Ծաղկողը՝** անհայտ։— **Ժամանակը՝** շատ հավանաբար 1893 թ.։— **Վայրը՝** Ֆոքշան (Ռումինիա)։— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 մարտի 1981 թ.։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել Մեսրովբ վարդապետ Տեր-Մովսիսյանցի «Ուղևորություն Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Երուսաղեմից—Էջմիածին», Վաղարշապատ, 1894 թ., էջ 211)։

## № 655
## ՈՒՂԵՐՁ

**Թերթերը՝** 2։— **Պրակները՝** 1։— **Մեծությունը՝** 45×30 սմ.— **Նյութը՝** սպիտակ մաքուր թուղթ։— **Կազմ՝** չունի։— **Պահպանակներ՝** չունի։— **Վիճակը՝** լավ։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 1բ և 2բ։— **Տողերը՝** թ. 1ա՝ 19 և թ. 2ա՝ 35։— **Գծումներ՝** չունի։— **Գիրը՝** շեղագիր։— **Զարդագրու-**

թյուն՝ գործարանային տպագիր թուղթն ունի գունավոր գեղեցիկ նկարներ: Թղթի վերևի մասում կա մի աղջիկ, հրեշտակի թևերով, որ հագնված է կապույտ շոր և աջ ձեռքով բռնած կանաչ տերևներով հյուսված մի պսակ: Նրա աջ ու ձախ կողմում, նստարանի վրա նստած են մեկական փոքրիկ աղջնակներ, դեղին և կարմիր շոր հագած, հրեշտակի թևերով, որոնց ձեռքին գրքեր կան: Թղթի երկու լուսանցքում կան գունավոր գեղեցիկ զարդեր, մրգերով ճյուղեր. կանաչ տերևներ և ծաղիկներ, ինչպես նաև բազմաթիվ իրեր՝ այսպես օրինակի համար կողպեք, մուրճ, աքցան, կարկին, եռանկյուն քանոն, նկարակալ, վրձին և այլն: Այս բոլորը տպագիր է:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Ռուսճուքի Թաղական Խորհուրդ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 7 օգոստոսի 1893 թ.:— **Վայրը՝** Ռուսճուք (Բուլղարիա):— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 մարտի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1984 թ., ապրիլ, էջ 32—33):

(Վերջում կա Թաղական Խորհրդի կլոր կնիքը, 4 սմ. տրամագծով, որի շուրջ բոլորը գրված է)
Руссенска Арменска Община
Թաղական Խորհուրդ Հայոց
ի Ռուսճուք:
(Ձեռագիր ամբողջ տեքստը գրված է ոսկեգույն բրոնզով):

№ 656
ՈՒՂԵՐՁ

**Թերթերը՝** 1:— **Մեծությունը՝** 63×47 սմ.:— **Նյութը՝** դեղնավուն հաստ բարակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար, 3—4 տեղ պատռված և վնասված է:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— Տողերը՝ 41:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** թղթի վերևում մի փոքրիկ խաչ կա, որի ներքևում երկու փոքրիկ հրեշտակներ մի պսակ են բռնած օդում: Ամբողջ գրությունն առնված է զարդերով նկարված մի շրջանակի մեջ: Այս բոլորը տպագրված է ոսկեգույնով, իսկ մեջի ուղերձ-գրությունը գրված է վարդագույն թանաքով:— **Պատվիրատուն՝** Սլիվենի հայոց օժանդակ ընկերություն:— **Ժամանակը՝** 27/9 հուլիսի 1893 թ.:— **Վայրը՝** Սլիվեն (Բուլղարիա):— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 մարտի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1984 թ., ապրիլ, էջ 33—34):

(Ձեռագրի ներքևի ձախակողմյան անկյունում կա ձվաձև մի կնիք, 4×2.3 սմ. չափերով, որի կենտրոնում երկու ձեռքեր իրար են բռնած, իսկ շուրջ բոլորը գրված է հետևյալը)
«Օժանդակ Ընկերութիւն»
Իսլիմեա
Տ. 1890:

№ 657
ՈՒՂԵՐՁ

**Թերթերը՝** 2:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 35.5×22.3 սմ.:— **Նյութը՝** սպիտակ մաքուր հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝** 26:—**Գծումներ՝** չունի:—**Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Արշակ Տեր-Միքելյան:— **Պատվիրատուն՝** Շուշու հայ հասարակություն:— **Ժամանակը՝** 27 օգոստոսի 1893 թ.: — **Վայրը՝** Շուշի (Լեռնային Ղարաբաղ):— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 մարտի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել Մեսրովբ վարդապետ Տեր-Մովսիսյանցի «Ուղևորություն Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Երուսաղեմից—Էջմիածին», Վաղարշապատ, 1894 թ., էջ 277):

№ 658
ՈՒՂԵՐՁ

**Թերթերը՝** 2:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 34×21 սմ.:— **Նյութը՝** մաքուր սպիտակ հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 2ա—2բ:— **Տողերը՝** 17:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Սուչավայի համայնք:— **Ժամանակը՝** 15/27 օգոստոսի 1893 թ.:— **Վայրը՝** Սուչավա (Ռումինիա):— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 մարտի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել Մեսրովբ վարդապետ Տեր-Մովսիսյանցի «Ուղևորություն Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Երուսաղեմից—Էջմիածին», Վաղարշապատ, 1894 թ., էջ 212):

(Ձեռագրի ներքևում կա կլոր մի փոքր կնիք, 2.7 սմ. տրամագծով, որի կենտրոնում նկարված է փոքրիկ մի խաչ, կշեռք և այլն, իսկ շուրջ բոլորը գրված է հետևյալը).
«Կնիք Սուչաւայի հայ ազգապետայ»:

№ 659
ՈՒՂԵՐՁ

**Թերթերը՝** 2։— **Պրակները՝** 1։— **Մեծությունը՝** 33×21 սմ.։— **Նյութը՝** մաքուր սպիտակ դիմացկուն թուղթ։— **Կազմ՝** չունի։— **Պահպանակներ՝** չունի։— **Վիճակը՝** լավ։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 1բ և 2բ։— **Տողերը՝** 24։— **Գծումներ՝** չունի։— **Գիրը՝** շեղագիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչ՝** Լևոն Բաբայան։— **Պատվիրատու՝** Լայպցիգի Հայ ճեմարանական ընկերություն։— **Ժամանակը՝** 29 հուլիսի 1893 թ.։— **Վայրը՝** Լայպցիգ (Գերմանիա)։— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 մարտի 1981 թ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1984 թ., ապրիլ, էջ 34)։

№ 660
ՈՒՂԵՐՁ

**Թերթերը՝** 2։— **Պրակները՝** 1։— **Մեծությունը՝** 32.2×21 սմ.— **Նյութը՝** սպիտակ մաքուր դիմացկուն թուղթ։— **Կազմ՝** չունի։— **Պահպանակներ՝** չունի։— **Վիճակը՝** լավ։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 1բ և 2բ։— **Տողերը՝** 22։— **Գծումներ՝** չունի։— **Գիրը՝** շեղագիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** Փարիզի հայ ուսանողություն։—**Ժամանակը՝** շատ հավանաբար 1893 թ.։— **Վայրը՝** Փարիզ (Ֆրանսիա)։— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 մարտի 1981 թ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1984 թ., ապրիլ, էջ 34—35)։

№ 661
ՈՒՂԵՐՁ

**Թերթերը՝** 2։— **Պրակները՝** 1։— **Մեծությունը՝** 34×21.2 սմ.։— **Նյութը՝** սպիտակ մաքուր դիմացկուն թուղթ։— **Կազմ՝** չունի։— **Պահպանակներ՝** չունի։— **Վիճակը՝** լավ։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 2բ։— **Տողերը՝** 32։— **Գծումներ՝** չունի։— **Գիրը՝** շեղագիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** Վառնայի Թաղական Խորհուրդ։— **Ժամանակը՝** 5 օգոստոսի 1893 թ.։— **Վայրը՝** Վառնա (Բուլղարիա)։— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 մարտի 1981 թ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1984 թ., ապրիլ, էջ 35)։

(Վերջում կա Թաղական Խորհրդի կլոր կնիքը, 3.5 սմ. տրամագծով, որի շուրջ բոլորը գրված է հետևյալը).

(կենտրոնում) Гр. Варна

(վերևում) Арменска Обшина

(շուրջը) Թաղական Խորհուրդ Հայոց ի Վառնա։

№ 662
ՈՒՂԵՐՁ

**Թերթերը՝** 2։— **Պրակները՝** 1։— **Մեծությունը՝** 42×29.2×0.2 սմ.։— **Նյութը՝** սպիտակ հաստ ստվարաթուղթ։— **Կազմ՝** չունի։— **Պահպանակներ՝** չունի։— **Վիճակը՝** լավ։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 2բ։— **Տողերը՝** 29։— **Գծումները՝** մատիտով քաշված։ —**Գիրը՝** շեղագիր։— **Զարդագրություն՝** առաջին էջում սև մատիտով մի մեծ նկար կա։ Վերևի մասի կենտրոնում նկարված է եպիսկոպոսական մի խույր, գավազան և խաչ։ Աջ կողմը երևում է Արարատյան դաշտը, Մասիս սարը, 2—3 անձինք և 2—3 կով։ Իսկ թերթի ձախ կիսում կա մեծ նկար, որտեղ վերևում երևում է մի շենք, որի վրա «Դպրոց» է գրված, իսկ ներքևում մի աշակերտ դեպի դպրոց է գնում։ Թերթի ներքևի մասում երևում են ավերակներ, որոնց մոտ կանգնած է մի կին իր երեխայի հետ, իսկ հեծյալ մի մարդ նիզակի ծայրը մտցնում է կնոջ գլխի մեջ։ Այս տեսարանից մի քիչ վերև մի մարդ, սուրը ձեռքին, աշխատում է պաշտպանել կնոջը և հարձակվել հեծյալ մարդու վրա։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** հայ վարժուհիներ և վարժապետներ, շատ հավանաբար Թիֆլիսի։— **Ծաղկողը՝** անհայտ։— **Ժամանակը՝** շատ հավանաբար 1893 թ.։— **Վայրը՝** շատ հավանաբար Թիֆլիս (Վրաստան)։— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ըստացված է Վեհափառ Հայրապետից 16 մարտի 1981 թ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1984 թ., ապրիլ, էջ 35—36)։

№ 663
ՈՒՂԵՐՁ

**Թերթերը՝** 4։— **Պրակները՝** 1։— **Մեծությունը՝** 35.3×22 սմ.։— **Նյութը՝** մաքուր սպիտակ դիմացկուն թուղթ։— **Կազմը՝** սև կաշեպատ տախտակ, որի չափերն են 43.3×30×1.2 սմ.։ Ներսի կողմը՝ նռնագույն կտավ։ Կազմի երեսին ճնշումով և ոսկեգույն տառերով գրված է հետևյալը.

«Առաքելաշաւիղ Հովուապետ
Ազգի Պաճառպան Հրեշտակ
Խրիմեան Հայրիկին
Բագուայ Հայ Երիտասարդութիւնից
1893 թ. օգոստոսի 30»:

(«Խրիմյան Հայրիկին» երկու բառերը միայն պղնձյա տառերով են գրված, յուրաքանչյուրը 1.5 սմ. երկարությամբ երկաթագրի ոճով, և ամրացված են կազմի երեսին): Կազմի վերևի մասում կա մի փոքրիկ թռչուն, որպես աղավնակերպ Ս. Հոգին, որ իջնում է երկնքից: Ներքևում կա եպիսկոպոսական մի խույր, խաչ, օձագլուխ գավազան և Ավետարանի բացված երկու էջ, որի վրա գրված է հետևյալը. «Ես եմ հովիւ քաջ, որ դնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց»: Ապա կա մի փոքրիկ ատող, վեց թևանի, իսկ ներքևում՝ գեղեցիկ մի ծաղկեպսակ, շուրջ 15 սմ. տրամագծով: Այս բոլորը (աղավնի, խույր, ծաղկեպսակ և այլն) արծաթյա է, որ ամրացված է կազմի երեսին: Այս կազմը հայկական արվեստի շատ գեղեցիկ մի նմուշ է: Օձագլուխ գավազանի ծայրամասում երկու տառ (ԻԱ) է փորագրված, որոնք շատ հավանաբար արծաթագործ վարպետի անվան երկու սկզբնատառերն են:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 3բ—4բ:— **Տողերը՝** 30:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Կոստանդին Խատիսյան:—**Պատվիրատուն՝** Բաքվի հայ երիտասարդություն:—**Ժամանակը՝** 30 օգոստոսի 1893 թ.:— **Վայրը՝** Բաքու (Ադրբեջան):— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 մարտի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել Մեսրովբ վարդապետ Տեր-Մովսիսյանցի «Ուղևորություն Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, Երուսաղեմից—Էջմիածին», Վաղարշապատ, 1894 թ., էջ 269):

№ 664
ՈՒՂԵՐՁ

**Թերթերը՝** 2:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 35.5×22 սմ.:— **Նյութը՝** դեղնավուն մաքուր դիմացկուն թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 2ա—2բ:— **Տողերը՝** 17:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Բաքվի Մարդասիրական ընկերություն:— **Ժամանակը՝** շատ հավանաբար 1893 թ.:— **Վայրը՝** Բաքու (Ադրբեջան):— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 մարտի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել Մեսրովբ վարդապետ Տեր-Մովսիսյանցի «Ուղևորություն Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, Երուսաղեմից—Էջմիածին», Վաղարշապատ, 1894 թ., էջ 275):

№ 665
ՈՒՂԵՐՁ

**Թերթերը՝** 2:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 35.5×22.4 սմ.:— **Նյութը՝** դեղնավուն մաքուր դիմացկուն թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 2բ:— **Տողերը՝** 25:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** բարակ բոլորգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Բաքվի հայ հասարակություն:— **Ժամանակը՝** շատ հավանաբար 1893 թ.:— **Վայրը՝** Բաքու (Ադրբեջան):— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 16 մարտի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել Մեսրովբ վարդապետ Տեր-Մովսիսյանցի «Ուղևորություն Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, Երուսաղեմից—Էջմիածին», Վաղարշապատ, 1894 թ., էջ 268):

(Շարունակելի)